

ՐԱՅԱՍՏԱՆ

ԺԻՐԱՅՐ ՍԷՖԻԼԵԱՆԸ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒԵՑ



Ժիրայր Սեֆիլեան ազատ արձակուել է ետք

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Յունիս 9-ին առաւօտեան «Վարդաշէն» քրէակատարողական հիմնարկից ազատ է արձակուել Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատար ժիրայր Սեֆիլեանը, ով ամբողջութեամբ կրեց դատավճռով սահմանուած պատիժը՝ 1,5 տարուայ ազատազրկումը:

«Շնորհակալութիւն եմ յայտնում առաջին հերթին լրագրողներին, որոնք այս մէկուկէս տարուայ ընթացքում, ի հեռուկա իշխանութիւնների, մեր խօսքը հասցրին ժողովրդին», - իրեն ողջունելու եկած մի քանի տասնեակ մարդկանց դիմելով՝ ասաց ժիրայր Սեֆիլեանը:

2006 թուականի Դեկտեմբերին ձերբակալուած Սեֆիլեանը դատարանի վճռով դատապարտուել էր 1, 5 տարուայ ազատազրկման՝ «անօրինական զէնք կրելու» համար:

Հարցին, թէ ինչով է մտադիր զբաղուել, նախկին ազատամարտիկը արձագանքեց. - «Նոյն գործով, որ զբաղուած էինք մինչեւ ապօրինի ձերբակալումը: Ուզում եմ 2 տարի պահեն, 20 տարի պահեն՝ դրանից ոչինչ չի փոխուի: Իրենք թող մտածեն իրենց մասին»:

1990 թուականին Հայաստան եկած լիբանանահայ Սեֆիլեանը

քաղաքացիութիւն ստանալու խնդրանքով երեք անգամ դիմել է Հայաստանի իշխանութիւններին եւ երեք անգամն էլ մերժուած ստացել: «Վարդաշէն» քրէակատարողական հիմնարկից Սեֆիլեանը անմիջապէս ուղեւորուեց Եռաբլուր՝ յարգանքի տուրք մատուցելու իր զոհուած մարտական ընկերների շիրիմներին եւ հանդիպելու այնտեղ հացադուլ յայտարարած նախկին ազատամարտիկներին:

«Երկու օր հանգստանամ եւ արդեն ձեր տրամադրութեան տակ եմ», - հացադուլաւորներին ասաց Սեֆիլեանը, ով, այդուհանդերձ, «այնքան էլ ընդունելի» չի համարում պայքարի այս ձեւը. - «Բաց, եթէ պայքարողներ կան, որոնք զնացել են այդ ծայրայեղ քայլին, մենք (այդ որոշումը) յարգում ենք: Միզուցէ նաեւ ապագայում մենք էլ այդ քայլին դիմենք»:

Պատասխանելով լրագրողներին մէկի հարցին, թէ ինչ է ակնկալում Համաժողովրդական շարժման Յունիսի 20-ին նախատեսած հանրահաւաքից, Սեֆիլեանը ասաց. - «Կարծում եմ, որ պայքարը մեծամասամբ տուել է իր արդիւնքը, մեծ մասը գործի՝ իշխանափոխութեան, արուած է: Յունիսի 20-ը կ'ունենայ վճռական դերակատարութիւն»:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ ՍԱՄՈՒԷԼ ԳԵՈՐԳԵԱՆԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Յունիսի 10-ին Ոստիկանութեան Արաբկիրի բաժնի աշխատակիցները յայտնաբերել են մարտի 10-ից հետախուզման մէջ գտնուող «Ղաւրաբաղ» կոմիտէի անդամ հեռուստապեկոմի նախկին նախագահ, Համաժողովրդական շարժման կենտրոնի ներկայացուցիչ Սամուէլ Գեորգեանին: Նա մեղադրուած է քրէական օրէնսգրքի 149-րդ յօդուածի երկրորդ մասի 5-րդ կէտով՝ ընտրական յանձնաժողովի աշխատանքները խոչընդոտելու համար: Նա, ըստ մեղադրանքի խոչընդոտել է թիւ 22/37 տեղամասի աշխատանքները:



«Ղաւրաբաղ» կոմիտէի անդամ Սամուէլ Գեորգեան

Իրաւապահները նրան չէին կարողանում յայտնաբերել մինչեւ մարտի 10-ը, երբ նրա նկատմամբ հետախուզում յայտարարուեց այն դէպքում, երբ Սամուէլ Գեորգեանը առնուազն մասնակցում էր հանրահաւաքներին եւ Մարտի 1-ին նա Ֆրանսիական դեսպանատան մօտ ինքնաբուխ հաւաքին ներկայ է եղել:

ՀՀ գլխաւոր դատախազի մամուլի քարտուղար Սոնա Տուզեանից տեղեկացանք, որ Սամուէլ Գեորգեանի դէմ քրէական գործը յարուցուել էր 2008 թուականի Փետրուարի 22-ին՝ Ոստիկանութեան Մարտունու քննչական բաժնի կողմից: Իհարկէ հարց է, թէ ինչպէս մեր

ՔԱՐԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ԹԻՒՈՎ ԱՌԱՋԻՆՆ ԵՆՔ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հայաստանում այսօր կա 191 քաղաքական բանտարկեալ», - «Ա1+»-ի հետ գրոցում փաստեց Հելսինքեան ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեանը: Այս փաստը նա ներկայացնելու է ԵՆ-ին եւ պահանջելու է միջազգային իրաւապաշտպան կառույցներին՝ զալ եւ տեսնել մեր քաղաքացիներին: Ի դէպ, նա ընդգծում է, որ իրեն չի հետաքրքրում՝ իշխանութիւնը կամ ընդդիմութիւնը նրանց համարում է քաղաքացիներ, թէ՞ չի համարում. «Մենք համարում ենք, որ նրանք քաղաքացիներ են, դիմում ենք միջազգային կառույցներին, թող գան ստուգեն», - ասում է Միքայէլ Դանիէլեանը եւ տեղեկացնում, որ «Amnesty international» կազմակերպութիւնն ու Եւրախորհուրդն է որոշում՝ քաղաքացիներ են, թէ ոչ:

Նա տեղեկացրեց, որ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Վրաստանի իրաւապաշտպան կազմակերպութիւնները պատրաստուած են դիմել Եւրախորհրդին՝ պահանջելով քաղաքացիներին մասով զեկուցող նշանակելու խնդրով: Այս համաձայնութիւնը երեք հանրապետութիւնների միջեւ ձեռք է բերուել Ապրիլին՝ Կիեւում կայացած «Համաշխարհային շարժում յանուն ժողովրդավարութեան» կոնգրեսում: Միքայէլ Դանիէլեանը լիջեցնում է, որ 2001 թուականին էլ կար գեկուցող քաղաքացիներին մասով, բայց այն ժամանակ Հայաստանի վիճակը մի քանի անգամ բարձր էր. կար միայն երկու քաղաքացիներ՝ Աշոտ Բլեանը եւ Արկադի Վարդանեանը, նրանց էլ մինչեւ զեկուցի ներկայացումը ազատեցին մեկուսարանից եւ այդ պատճառով Հայաստանում



Հելսինքեան ասոցիացիայի նախագահ Միքայէլ Դանիէլեան

տանի մասով զեկուցող դուրս եկաւ. «Ատրպէյճանի համար զեկուցողը գործում էր, եւ լուրջ աշխատանք է տարել: Երբ մարդկանց ձերբակալեցին մարտի 1-ի դէպքերից յետոյ, մենք նորից բարձրացրինք այդ խնդիրը ու որոշեցինք, որ լաւ կը լինի, եթէ Վրաստանն էլ միանայ մեզ»:

Ադրբեջանում կայ 80-90 հոգի, Վրաստանում էլ՝ մի քանի տասնեակ քաղաքացիներ: Ատրպէյճանի քաղաքացիները դեռ ԵՆ-ին անդամակցելու գործընթացի ժամանակներից են: «Այն ժամանակ էր դեռ պահանջ դրուած, որ հանէք նրանց բանտարկից: Եթէ Ատրպէյճանը հանգիստ նստած է եւ Եւրախորհրդի հետ պրոբլեմ չունի, Հայաստանի իշխանութիւնը ինչի՞ պիտի պրոբլեմ ունենայ, ես կարծում եմ, որ Հայաստանի իշխանութիւնը կը գնայ Ատրպէյճանի ճանապարհով», - ասաց Միքայէլ Դանիէլեանը:

ԱՐՄԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. «ԵՍ ԸՆԴԱՄԷՆ ԶԱՐՑԵՐ ԵՄ ՏԱԼԻՍ ԻՄ ԶԵԿՈՅՑՈՒՄ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈ»: Հայաստանի մարդու իրաւունքների պաշտպան Արմէն Յարութիւնեանը Յունիս 6-ի օրը յայտարարեց, որ նախագահական ընտրութիւնների եւ հետընտրական զարգացումների վերաբերեալ իր արտահերթ զեկուցում, մասնաւորապէս՝ Մարտի 1-ի իրադարձութիւնների առնչութեամբ, ընդամէնը տուել է հարցեր, որոնց պատասխանները հետաքրքրում են հասարակութեանը, եւ որոնց անպատասխան մնալը «խորացնելու է անհանդուրժողականութեան միջոցառումը»:

«Ես ոչ մի պնդում եւ եզրույն չեմ արել իմ զեկուցում», - Հայաստանի քաղաքագետների միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած հասարակական լուծումների ժամանակ ասաց Յարութիւնեանը: - «Ես հարցեր եմ տալիս. ասում եմ՝ լաւ, հնարաւոր էջր այն լրագրողները, որ նկարահանում էին, թողնէիք նկարահանէին, մենք էլ կը տեսնէինք ինչ է եղել, կը համոզուէինք, որ դա օրինական է եղել: Ինչո՞ւ էք ժապաւէնները վերցրել լրագրողներից»:

«Կամ այդ զէնքերը, որ այդտեղ նկարահանուած էին եւ ձեռքով վերցնում էին (ոստիկանները)», - շարունակեց օմբուդմենը: - «Պաշտպանի գործը չի՞ դա, որ ասի՝ յարգելիներս, դուք որ դա ձեռքով վերցնում էք, յետոյ ո՞նց էք ապացուցելու, որ դա ցուցարարներին է»:

«Ուղղակիորէն եթերով Հանրապետութեան նախագահը յայտարարեց, որ երեք հոգի մահացան են, որովհետեւ այն յատուկ միջոցները, որ կիրառուել են, հնացած են եղել», -

լիջեցրեց Արմէն Յարութիւնեանը՝ հարցնելով. - «Մարդու իրաւունքների պաշտպանը չկարողանա՞լ իր զեկուցի մակարդակով հարցադրում անի՞ իսկ ո՞վ է մեղաւոր եւ պատասխանատուութիւն կրում, որ այդքան հնացած յատուկ միջոցներ էիք օգտագործում, եւ երեք հոգի մարդ է մահացել: Ես կարծում եմ, որ այդ հարցերի պատասխանը մինչեւ չարուի՝ ասէկօսները, բամբասանքը աւելի են խորացնելու անհանդուրժողականութեան միջոցառումը հասարակութիւնում»:

Մարդու իրաւունքների պաշտպանը յայտարարեց, որ նաեւ այդ հարցերի պատասխանները ստանալու առումով խիստ կարեւոր է համարում անկախ յանձնաժողովի ստեղծումը, որը, վայելելով հասարակութեան վստահութիւնը, կը կարողանայ պարզել Մարտի 1-ի իրադարձութիւնների պատճառները՝ դրանով իսկ թուլացնելով լարուածութիւնը. - «Այդ մարմինը այնպէս պէտք է ստեղծուի, որ քաղաքական ուժերը այդտեղ կարողանան պարիտեստային մասնակցութիւն ունենալ, որտեղ պառլամենտական եւ յատկապէս արտապառլամենտական ընդդիմութիւնը պատկառելի դերակատարութիւն ունենայ»:

Ի պատասխան «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ հաւատո՞ւմ է, որ կ'ստանայ իր բարձրացրած հարցերի պատասխանները, Յարութիւնեանը պատասխանեց. - «Ես համոզուած եմ, որ այդ հարցերի պատասխանները ստանալու եմ: Ուրիշ տարբերակ չեմ տեսնում»: